

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Սյունիքի տարածաշրջանային մասնաճյուղ

**The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre**



**ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

*Հունվար*

*2022թ.*

31.01.2022

**Մեղրիում կրակային գորավարժություններ են. կրակոցներ լսելու դեպքում խուճապի մատնվել պետք չէ. համայնքապետարան**

Մյունիքի մարզի Մեղրի քաղաքի համայնքապետարանը տարածել է հայտարարություն, որում ասված է. «Մեղրի համայնքի հարգելի՛ բնակիչներ, տեղեկացնում ենք ռուսական սահմանապահ զորամասի հրաձգարանում կրակային գորավարժություններ են կատարվում:

Կրակոցների ձայներ լսելու դեպքում հորդորում ենք հանրության շրջանում չառաջացնել անհարկի խուճապ»:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/meghri.municipality/posts/315670420604652>

31.01.2022

**Գորիս-Կապան ճանապարհին գանձումների վերաբերյալ Ադրբեջանի պաշտոնական թվերը իրատեսական չեն**

Հայաստանյան լրատվամիջոցները 2021թ. դեկտեմբերի 12-ին [տարածել էին](#) Ադրբեջանի մաքսային պետական կոմիտեի նախագահ Սաֆար Մեհթիևի [հայտարարությունը](#), թե իբր Գորիս-Կապան ավտոճանապարհի Ադրբեջանի կողմից վերահսկվող հատվածում տեղակայված մաքսատունը երկու ամսվա ընթացքում գանձել է շուրջ 2 մլն մանաթ (1,18 մլն դոլար) գումար: Հայաստանում այս հայտարարությունը մեծ արձագանք էր ստացել, և ՄիվիլՆեթի փաստերի ստուգման թիմը (CivilNetCheck) փորձեց ստուգել հնչեցված թվի իրատեսական լինելը:

2021-ի սեպտեմբերի 12-ին Հայաստանի Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) [հանորդագրություն](#) էր տարածել՝ նշելով, որ նույն օրվանից Գորիս-Կապան միջպետական ճանապարհի Որոտան բնակավայրի մոտ Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող Էյվազլի բնակավայրի հատվածում Ադրբեջանի ոստիկանությունն իրականացնում է իրանական պետհամարանիշներով բեռնատարների վարորդների ու բեռի փաստաթղթերի ստուգում:

Համացանցում հայտնված [անորորագրերից էրևում է](#), որ իրանցի բեռնատարների վարորդներից ադրբեջանցիները գանձել էին 221 մանաթ կամ 130 դոլար: Երկու անորորագրերը լրացվել են 2021-ի սեպտեմբերին և դեկտեմբերին:

**CƏNUB ƏRAZI BAŞ GÖMRÜK İDARƏSİ VÖEN:4100019441**  
 MƏDAXİL QƏBZİ  
 Seriya GLM № 739501  
 12 - Sentyabr 2021 il

Sıra №-si	Məhsul, iş və xidmətin adı	Ölçü vah.	Miqdarı	Vahidin qiyməti (manatla)	Məbləği (manatla)
1	40 vergiye	L	51	2111	107661
2	30000 manat	L	121	1100	133200

Məhsul, iş və xidmət satışından cəmi ödə edilməmişdir  
 İcracı: M.Y. *Cayran* manat qəp.

**CƏNUB ƏRAZI BAŞ GÖMRÜK İDARƏSİ VÖEN:4100019441**  
 MƏDAXİL QƏBZİ  
 Seriya GLM № 743260  
 12 - Sentyabr 2021 il

Sıra №-si	Məhsul, iş və xidmətin adı	Ölçü vah.	Miqdarı	Vahidin qiyməti (manatla)	Məbləği (manatla)
1	3TB	L	2	650	1300
2	VIN	L	2	150	300

Məhsul, iş və xidmət satışından cəmi ödə edilməmişdir  
 İcracı: M.Y. *RAHMAN* manat qəp.

Քանի որ հնարավոր չէ հստակ պարզել, թե իրանական քանի բեռնատար է օգտվել Ադրբեջանի կողմից վերահսկվող ճանապարհից և այնտեղ մաքսատուրք վճարել, մենք փորձեցինք կոպիտ հաշվարկի միջոցով հասկանալ հնչեցված թվի իրատեսական լինելը:

Որքա՞ն իրանական բեռնատար է մտել Հաայաստան

Հիշենք, որ 2021-ի հատկապես հոկտեմբերից սկսած՝ իրանական բեռնատարների մեծ մասը սկսել է երթնելել Տաթևով անցնող այլընտրանքային ճանապարհով՝ Ադրբեջանին հավելյալ մաքսատուրք չվճարելու համար:

Այն, որ շատ իրանական բեռնատարների վարորդներ չեն օգտվում Գորիս-Կապան ճանապարհից, ՍիվիլՆեթի Գորիսի լրագրող Էմիլիա Խաչատրյանի հետ զրույցում [փաստել է](#) նաև Քարահունջ գյուղի մի բնակիչ, որը ճանապարհին բենզին և յուղ է վաճառում և առևտրական կապեր ունի իրանցիների հետ: Նա հայտնել է, որ օրական իրանական առավելագույնը հինգ բեռնատար է անցնում ճանապարհով:

Այսպես, Պետական եկամուտների կոմիտեից CivilNet Check-ը պարզել է, որ սեպտեմբերի 12-ից դետեկտեմբերի 12-ը (այս ժամանակահատվախի մասին էր խոսել Ադրբեջանի մաքսային պետական կոմիտեի նախագահը) Մեդրիով մուտք և ելք կատարած իրանական բեռնատարների թիվը ընդհանուր 7 233 է: Եթե անգամ դրանք բոլորը օգտվել են Գորիս-Կապան ճանապարհի ադրբեջանական վերահսկողությանն անցած հատվածով և 221 մանաթ կամ 130 դոլար մաքսատուրք վճարել ադրբեջանցիներին, ապա կստացվի որ Ադրբեջանը գանձել է 1 598 493 մանաթ կամ 940 000 դոլար, ինչը չի համընկնում Ադրբեջանի մաքսային պետական կոմիտեի նախագահ Սաֆար Մեհթիևի հնչեցրած թվի հետ:

Միաժամանակ, ՍիվիլՆեթի Գորիսի լրագրողը Քարահունջում բենզին և յուղ վաճառող մի քաղաքացուց [տեղեկացել էր](#), որ իրանցիները Ադրբեջանի մաքսայիններին վճարում են 250-260 դոլար, եթե տեղափոխում են հրավտանգ բեռ (գազ, յուղ): Եթե հաշվարկը արվի միջինացված՝ շուրջ 195 դոլար մաքսատուրքով, ապա կստացվի 1,4 մլն դոլար:

Սա սակայն Ադրբեջանի կողմից ենթադրաբար գանձված գումարի վերին սահմանն է: Ինչպես նշեցինք, այն իրատեսական չէ, քանի որ իրանցի վարորդների մեծ մասը փաստացի օգտվում է այլընտրանքային ճանապարհից՝ կրկնակի մաքսատուրք չվճարելու համար:

Աղբյուրը՝ <https://bit.ly/3or87Z9>

**31.01.2022**

### **Գորիս ՅՈՒ. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի աշակերտ Արտակ Աղաբեկյանն ընթրամարտի միջազգային մրցաշարում նվաճել է ոսկե մեդալ**

Հունվարի 28-30-ը Ռուսաստանի Դաշնության Ստավրապոլ քաղաքում տեղի ունեցավ ազատ ընթրամարտի միջազգային առաջնություն, որին մասնակցեցին նաև Գորիսի տարածքային մանկապատանեկան մարզադպրոցի 35 կգ քաշային կարգի մարզիկներ Արտակ Աղաբեկյանն ու Ալեն Միրզոյանը:

Միջազգային մրցաշարում Գորիսի տարածքային մանկապատանեկան մարզադպրոցի ընթրիշները փայլուն մրցելույթներ ունեցան և նվաճեցին համապատասխանաբար 1 ոսկե ու 1 բրոնզե մեդալներ:

Արտակ Աղաբեկյանը, ով Գորիս ՅՈՒ. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի 7-րդ «Գ» դասարանի աշակերտ է, գերազանց հանդես եկավ: Եզրափակիչ գոտեմարտը ծանր ու

համառ պայքարի արդյունքում նա հաղթեց 3:2 հաշվով և դարձավ իր քաշային կարգում առաջնության բացարձակ չեմպիոն՝ նվաճելով ոսկե մեդալ:

Տաթև համայնքի Շինուհայր գյուղից Ալեն Միրզոյանը թե՛՛ պայքարի արդյունքում միայն մեկ միավորով զիջել է ՌԴ ներկայացուցչին ու զբաղեցրել պատվո հարթակի 3-րդ հորիզոնականը՝ նվաճելով բրոնզե մեդալ:

Ի սրտե շնորհավորում ենք Գորիսի տարածքային մանկապատանեկան մարզադպրոցի մարզիչ-մանկավարժներին ու մարզիկներին, ցանկանում շարունակական վերելքներ ու բազմաթիվ այսպիսի ոգեշնչող հաղթանակներ:

Աղբյուրը՝ <http://goris3school.am/publ/2-1-0-150?fbclid=IwAR0Uy1YDJ-Qfepk2adi97JDiRt1NYWfFymKCTiSR1zSpe3kgwibSzm0sKhY>

**29.01.2022**

### **Ջարգացնել տնտեսությունը՝ պահպանելով բնությունը**

Հունվարի 27-ին Սյունիքի մարզպետարանում Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մասնաճյուղի եւ Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության պատասխանատուները ներկայացրեցին կազմակերպությունների կողմից իրականացվող «Հայաստանում կենդանի լանդշաֆտները տնտեսական զարգացման համար» ծրագիրը: Այն մեկնարկել է 2021թ. ու կավարտվի 2028-ին:

Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի մարզերում ֆերմերների եւ գյուղական բիզնեսների եկամուտը՝ տեղական բնական ռեսուրսների տնտեսապես ավելի արդյունավետ ու առավել կայուն օգտագործման շնորհիվ: Ծրագիրն իրականացվում է Սյունիքի, Տավուշի, Լոռու եւ Վայոց ձորի մարզերում:

Հանդիպմանը ներկա էին Սյունիքի մարզպետի տեղակալ Կարո Ավանեսյանը, մարզպետարանի՝ ծրագրի բաղադրիչներին առնչվող վարչությունների ու բաժինների մասնագետներ, Միսիանի համայնքապետարանի աշխատակիցներ (ծրագրի շահառու է Շաղատ բնակավայրը):

Հանդիպմանը ներկայացվեցին ծրագրի նպատակները, ակնկալվող արդյունքները, դրա շրջանակներում մինչ այժմ արված աշխատանքը: Այն հիմնականում ուղղված է գյուղատնտեսության ու զբոսաշրջության զարգացմանը. ծրագիրն իրար է կապում տնտեսական աճն ու բնության պահպանությունը՝ ցույց տալով, որ հնարավոր է զարգացնել առաջինը՝ առանց վնասելու շրջակա միջավայրը:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/syunikregionaladministration/posts/301859928650045>

**29.01.2022**

### **Նշվեց բանակի 30-րդ տարեդարձը**

Կորոնավիրուսի համավարակի ահագնացման հետ կապված՝ մարզկենտրոնում հայոց զինված ուժերի 30-րդ տարեդարձին նվիրված զանգվածային միջոցառումներ չանցկացվեցին: Այնուամենայնիվ, օրվա խորհրդին պատշաճող ցերեկույթներ եղան, դրանցից մեկը Շմավոն Մովսիսյանի անվան Կապանի պատմության թանգարանում էր: Մշակույթի այդ օջախի հարևանությամբ գտնվող թիվ 7 նախադպրոցական ուսումնական հաստատության

դաստիարակները և սաները թանգարանի՝ Արցախյան երեք պատերազմների նահատակների հիշատակը հավերժացնող սրահում հանդես եկան գրական-երաժշտական համադրությամբ, որը նվիրեցին 44-օրյա պատերազմում նահատակված մանկապարտեզի նախկին սաներ Տիրան Պետրոսյանի, Սերյոժա Լալաբեկյանի և Գոռ Անդրեասյանի հիշատակին:

Երգչուհիներ Էլեն Գրիգորյանը և Անուշ Դավթյանը կատարեցին ազգային-հայրենասիրական երգեր: Ընդ որում Էլեն Գրիգորյանը հնչեցրեց իր «Աղոթք ազգի փրկության» հեղինակային երգը՝ ծնված 44-օրյա պատերազմի հույզերից ու ապրումներից: Համերգային ծրագիրը ներառում էր պարային կատարումներ. «Նարա Դանս» համույթը (գեղարվեստական ղեկավար՝ Նարինե Մովսիսյան) ներկայացրեց «Իմ հերոս» պարային բեմադրությունը:

Ներկաները ամուր ոգի մաղթեցին հայոց բանակին, հայ զինվորին՝ բարի և անփորձանք ծառայություն՝ մեկ անգամ ևս շեշտելով, որ հանրապետության անվտանգության և խաղաղության միակ երաշխավորը հայոց բանակն է, նրա հայրենասեր զինվորն ու սպան:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/nshvets-banaki-30-rd-taredardzy>

**27.01.2022**

### **Շինուհայրի խաչմերուկ-Տաթև-Կապան վերաշինված մայրուղին, այնուամենայնիվ, շարունակում է մնալ խնդրահարույց**

Մայրուղու դժվարանցանելի տեղամասերից մեկը Տաթևի արեւելյան մուտքն է:

Մոտ 100 մ երկարությամբ սողանքային հատվածը, որ գրունտային է, ամենաթեթևակի տեղումներից հետո անգամ, հատկապես խոշոր բեռնատարների եւ կցորդով մեքենաների համար, դառնում է անանցանելի՝ ներքեից (Սատանի կամրջից) բարձրացողների համար:

Այսօր՝ ժամը 18-ի սահմաններում կրկին անանցանելի էր ճանապարհի այդ հատվածը:

«Ումար» ՍՊ ընկերության աշխատակիցների ջանքերով, մոտ մեկ ժամից հետո, մայրուղին վերաբացվեց բոլոր տեսակի մեքենաների երթևեկության համար:

Ճանապարհաշինական այդ ընկերության ներկայացուցիչ, աշխղեկ Հրայր Թունյանի վկայությամբ՝ նման իրավիճակներ հաճախակի են առաջանում տվյալ հատվածում, եւ ամեն անգամ ավագակոպիչ տեղադրելով խնդրին ժամանակավոր լուծում է տրվում:

Սակայն, նկատի ունենալով իրողությունը, որ այդ մայրուղին խիստ ծանրաբեռնված է (Գորիս-Կապան ճանապարհի առանձին հատվածներ Ադրբեջանի կողմից օկուպացվելուց հետո), հույժ կարեւոր է դարձել Շինուհայրի խաչմերուկ-Տաթև ճանապարհի այդ հանգույցի հիմնանորոգումը: Այլապես ամեն անգամ՝ անձրեից կամ ձյունից հետո, Տաթևի մերձակա ճանապարհահատվածն դժվարանցանելի է լինելու՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով:

Կարծում ենք՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի պատասխանատուները՝ 2022-ի աշխատանքները պլանավորելիս, նկատի կունենան այդ հանգամանքը:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/shinuhayri-khachmeruk-tate%D6%82-kapan-verashinvats-mayrukhin-aynuamenayniv-sharunakum-e-mnal-khndraharuyts>

**24.01.2022**

**ՊԵԿ-ը հրապարակել է 1000 խոշոր հարկատուների ցանկը. այն գլխավորում է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը**

Հարկային մարմնի կողմից հրապարակվել է 2021 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում առաջին 1000 խոշոր հարկ վճարողների կողմից վճարված հարկերի վերաբերյալ տեղեկատվությունը: «[Արմենպրես](#)»-ի փոխանցմամբ՝ այս մասին հայտնում է Պետական եկամուտների կոմիտեն: 1000 խոշոր հարկ վճարողների կողմից 2021թ. 12 ամիսների ընթացքում պետական բյուջե ընդհանուր առմամբ վճարվել է ավելի քան 1 տրիլիոն 206 մլրդ դրամ: Հարկային մարմին կատարված վճարումների գումարը կազմել է ավելի քան 989 մլրդ 980 մլն դրամ, իսկ մաքսային մարմին կատարված վճարումների գումարը կազմել է ավելի քան 216 մլրդ 881 մլն դրամ: 1000 խոշոր հարկ վճարողների ցուցակը գլխավորում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»-ը (48,842,019): Թվով երկրորդ խոշոր հարկատուն «Գազպրոմ Ամենիա»-ն է (47,825,132):

Տասնյակում տեղ են գտել նաև «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության աշխատակազմ»-ը (42,656,806), «Գրանդ Տոբակո»-ն (42,157,046), «Գեոպրոմայնինգ գոլդ»-ը (20,839,147), «Ինտերնեյշնլ Մասիս տաբակ»-ը (20,235,400), «Սիփիէս օիլ»-ը (18,139,549), «ՄՏՍ Հայաստան»-ը (15,715,402), «Ֆլեշ»-ը (15,482,097) և «Թեդուտ»-ը (15,325,378):

Ցանկը հրապարակվել է՝ հիմք ընդունելով ներկայումս գործող ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված չափորոշիչները, մասնավորապես՝ ցանկում ներառվել են պետական և համայնքային կառավարչական հիմնարկները:

Աղբյուրը՝ <https://armenpress.am/arm/news/1073804/>

## 21.01.2022

### Կարմիր խաչի միջազգային կոմիտեն իր ամենազնաց մեքենայով չի կարողացել հունվարի 20-ին սնունդ ու հիգիենիկ պարագաներ հասցնել Բարձրավան գյուղ. ՄԻՊ

ՀՀ ՄԻՊ Արման Թաթոյանը ֆեյսբուքի իր գրառման մեջ գրել է. «Ինչ-որ մեկը մտածում է, թե Ադրբեջանն այս ճանապարհները փակել է առանց իմանալու՝ մարդիկ ի՞նչ գրկանքների են ենթարկվելու ու մարդկանց կյանքը ինչ աստիճան է դժվարանալու:

Ադրբեջանական զինված ծառայողները բացահայտ հանցավոր արարքներով 2021թ. նոյեմբերից փակել են Գորիս-Կապան և Կապան-Ճակատեն ճանապարհները. ամեն օր, ամեն րոպե խախտված են Գորիսի և Կապանի բնակիչների՝ մեր մարդկանց իրավունքները:

Գորիսի Բարձրավան, Շուռնուխ և Որոտան գյուղերում, Կապանի Ճակատեն, Շիկահող, Սրաշեն, Ներքին Հանդ, Ծավ, Շիշկերտ գյուղերում մարդիկ կանգնել են հատկապես եղանակային պայմանների պատճառով մեկուսացման և հումանիտար խնդիրների առաջ:

Օրինակ՝ Գորիս համայնքում ուսուցիչները, այսպես կոչված, այլընտրանքային ճանապարհով եղանակային պայմանների պատճառով չեն կարողացել աշխատանքի գնալ անգամ ռազմական Ուրալ մեքենայով: Բա սա կրթության ու աշխատանքային, ազատ տեղաշարժման իրավունքների խախտում չէ՞:

Դժվարանցանելի է ու հատկապես վատ վիճակում է, օրինակ, Տաթև-Կապան ճանապարհի հատվածը, որ տանում է դեպի Բարձրավան: Բա սա մարդու ազատ տեղաշարժման ու դրա հետ կապված մյուս իրավունքների խախտում չէ:

Կարմիր խաչի միջազգային կոմիտեն իր ամենագնաց մեքենայով չի կարողացել հունվարի 20-ին սնունդ ու հիգիենիկ պարագաներ հասցնել Բարձրավան գյուղ: Այս ամենն այսօր ճշտել ենք:

ԱԻՆ-ի, ԱԱԾ-ի սահմանապահ զորքերի ծառայողներն են անձնվիրաբար աշխատանքով սնունդ հասցնում գյուղեր ու այն էլ շատ դժվար:

Բա ինչպե՞ս է ապահովվելու շտապ բժշկական օգնության հասանելիությունը, հոսպիտալացումները և այլն: Բա սա առողջության պահպանման ու կյանքի իրավունքի հարց չէ՞:

Այստեղ արժանապատվության հարցեր չկա՞ն:

Մրան գումարած՝ թե՛ Գորիսի, թե՛ Կապանի դեպքում նշված գյուղեր տանող, այսպես կոչված, այլընտրանքային ճանապարհները դիտարկվում են ադրբեջանական զինված ծառայողների կողմից: Դիտարկվող է դարձել նաև Կապանի Գեղանուշ գյուղը, որով այդ ճանապարհը տանում է դեպի Ճակատեն ու մյուս գյուղերը: Այդ երկրի զինվորականների ուղիղ թիրախի ներքո են:

Այսինքն՝ ապահովված չէ նաև անվտանգությունը:

Ու ինչու՞ պետք է ադրբեջանական զինված ծառայողների, իշխանությունների որևէ հիմք չունեցող, պարզապես հանցավոր արարքների պատճառով մեր բնակիչները նման զրկանքներ կրեն:

Բա սա չի նշանակու՞մ, որ դա արված է մեր խաղաղ բնակիչներին վնաս պատճառելու դիտավորությամբ, որ ատելության քաղաքականությունը շարունակվում է ու չի ավարտվել: Այս պայմաններում, Ադրբեջանի խաղաղասիրությունը կարող է ազնիվ կամ իրական լինե՞լ:

Այս բոլոր հարցերը պետք է լինեն մեր երկրի պետական քաղաքականության հիմքում:

Բա ո՞նց կարելի էր ասել, թե ճանապարհներին նրանց հայտնվելը «ադրբեջանական տարածք է ու մենք ոչինչ չենք կարող անել», ո՞նց կարելի էր զբաղվել այլընտրանքային ճանապարհների գովքով ու «արդարացնել» ադրբեջանական խախտումները և դեռ մի հատ էլ քաղաքականացնել նրանց, ովքեր Բարձրացնում են մարդու իրավունքների հարցերը:

Բա մարդկանց պատճառվող այսքան զրկանքները քաղաքական հարցե՞ր են: Բա անվտանգությունն ու մարդու իրավունքները կարելի՞ է մարդուց կտրել:

Հակառակը՝ պետության ուղիղ պոզիտիվ պարտավորությունն է պաշտպանել այդ իրավունքները, ամեն ինչ անել, որ մարդուց անվտանգությունը չկտրվի ու չքաղաքականացվեն մարդու իրավունքների հարցերը: Հակառակ դեպքում ուղղակի անվտանգությունից էլ ամբողջությամբ կզրկվենք:

Պետք է նրանց հեռացնելու ուղղությամբ աշխատել, որ մեր բնակիչների միջազգայնորեն երաշխավորված իրավունքները վերականգնվեն:

Այնպես որ ելքը մեկն է՝ ադրբեջանական զինված ծառայողները պետք է հեռացվեն մեր գյուղերի մոտից ու ճանապարհներից և վերջ:

Մեր քաղաքացիները, մեր ողջ երկրի խաղաղ բնակչությունը չպետք է զրկանքներ կրի տարիների խորքից եկող հայաստացության քաղաքականություն տանող ադրբեջանական իշխանությունների պատճառով:

Մենք ունենք մեր իրավունքները պաշտպանելու, արժանապատիվ ապրելու օրինական իրավունքներ:

Միջազգային կանոնները դա անել թույլ են տալիս. ԵԱՀԿ, ՄԱԿ-ի ու մյուս կառույցների կանոններ:

Արման Թաթոյան

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան»:

Աղբյուրը՝

[https://www.facebook.com/permalink.php?story\\_fbid=1004371193495419&id=100017676420633](https://www.facebook.com/permalink.php?story_fbid=1004371193495419&id=100017676420633)

**20.01.2022**

### **Հայֆրանսիական «Հիմնասավուշ» զարգացման հիմնադրամը ներդրումներ կանի նաև Տաթև համայնքում**

Արդեն 13 տարի Տավուշի մարզում հսկայական ծրագրեր իրականացրած Հայֆրանսիական «Հիմնասավուշ» զարգացման հիմնադրամը այս տարի իր աշխատանքային թիմն է ձևավորել նաև Սյունիքում: Մարզի հիմնախնդիրներին ծանոթանալու, առաջնային ծրագրերին ընթացք տալու միտմամբ ծրագրերի համակարգողներ Սեդա Մավիյանը և Ներսես Շադունցը աշխատակիցներ Սամվելի, Արթուրի հետ այցելեցին Տաթև համայնք: Համայնքի ղեկավար Սամվել Լալայանի աշխատասենյակում կայացած հանդիպման ընթացքում քննարկվեցին Քաշունի, Սվարանց բնակավայրերի խմելու և ոռոգման ջրերի հարցերը: Անդրադարձ եղավ նաև համայնքի ամենաքիչ բնակիչ ունեցող Քաշունի գյուղի վերաբնակեցման խնդրին, կարևորվեց անօթևան ընտանիքների համար գյուղում պայմաններ ստեղծելու, անասնապահությունն ու գյուղատնտեսությունը զարգացնելու հարցերը: Տաթև համայնքի ղեկավար Սամվել Լալայանը աջակցելու, իրենից կախված բոլոր խնդիրներին ընթացք տալու և համայնքի զարգացման ծրագրերին մասնակցություն ունենալու պատրաստակամություն հայտնեց: Քաշունու վարչական ղեկավարն էլ գյուղում բնակություն հաստատելու ցանկություն ունեցող ընտանիքներին խոստացավ իր կողմից ոչխարներ նիվիրել:

Սվարանց գյուղի հիմնական խնդիրը մաքուր խմելու ջուր ունենալն է: 83 բնակիչ ունեցող գյուղը թեև երեք աղբյուր ունի, սակայն ջուրը բնակիչներին չի հասնում: Ծրագրի պատասխանատուները խոստացան զարնանը տեղում ծանոթանալ խնդրին:

Ի դեպ՝ գյուղատնտեսության զարգացման վրա շեշտադրություն դրած

Հայֆրանսիական «Հիմնասավուշ» հիմնադրամը այս պահին աշխատանքներ է իրականացնում նաև Տեղ համայնքի Արավուս գյուղը ջրով ապահովելու ուղղությամբ, որի ընթացքի մասին պարբերաբար կներկայացվի:

Աղբյուրը՝

<https://syuniacyerkir.am/hayfransiakan-himnatavush-zargatsman-himnadramy-nerdrumner-kani-naev-tatev-hamaynqum>

**19.01.2022**

### **Բիզնես պլանից մինչև քիզնեսի իրագործում**

Youth Opportunities Club NGO-ը սկսում է անվճար դասընթաց Կապան և Քաջարան խոշորացված համայնքների 16-35 տարեկան երիտասարդների համար

Ծրագրի մասնակիցներից կընտրվեն 3 հաղթողներ, որոնք հնարավորություն կստանան իրականացնել իրենց քիզնես գաղափարները՝ ստանալով դրամաշնորհներ



1 հորիզոնական – **1200€** (663.000 դրամ)

2 հորիզոնական – **800€** (442.000 դրամ)

3 հորիզոնական – **544€** (300.000 դրամ)

Ուշադրություն, դրամաշնորհը ստացած մասնակիցները պարտավորվում են ստացած դրամաշնորհի 30%-ի չափով համաֆինանսավորում իրականացնել:

Հայտադիմումը՝ <https://forms.gle/PCj5iYU6BPmFTmEw7>

Դիմումների վերջնաժամկետը՝ հունվարի 29

Ծրագիրն իրականացվում է [#UMCOR](#) ARMENIA բարեգործական հիմնադրամի, Blooming Armenia-ի, ֆրանսիական ASDA-ի և Կապան խոշորացված համայնքի ֆինանսական աջակցությամբ:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/syunikregionaladministration/posts/294387606063944>

**19.01.2022**

**Կառավարությունը 175 միլիոն դրամի օժանդակություն է տրամադրել Սյունիքի հյուրանոցներին**

Այս տարվա ընթացքում Սյունիքի հյուրանոցներում և հյուրատներում զբաղվածությունը բավարար չի եղել և Կառավարությունը որոշել է լրացուցիչ օժանդակություն տրամադրել ոլորտի տնտեսավարողներին: Ինչպես տեղեկացնում է [«Արմենպրես»](#)-ը, Ազգային ժողովում Կառավարության հարց ու պատասխանի ժամանակ այս մասին ասաց Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը՝ պատասխանելով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արմեն Խաչատրյանի հարցին, թե վերջին շրջանում ինչպիսի՞ փոխհատուցումներ և օգնություն է տրվել Սյունիքի մարզի հյուրանոցներին և հյուրատներին և որքա՞ն է այդ փոխհատուցումների ծավալը:

«Ինչպես գիտեք Սյունիքում գտնվող հյուրանոցները առանձնակի են տուժել կորոնավիրուսից և պատերազմի շոկերից, քանի որ նաև անվտանգային որոշակի դժվարություններ և խնդիրներ այնտեղ կար: Սյունիքի հյուրանոցներում զբաղվածությունը այս տարվա ընթացքում բավարար չի եղել և Կառավարությունը որոշեց լրացուցիչ օժանդակություն տրամադրել Սյունիքի հյուրանոցներին և այդ օժանդակության չափը կազմում է 175 միլիոն դրամ», - ասաց Քերոբյանը:

Նախարարը նշեց, որ Կառավարությունը ուշի-ուշով հետևում է իրադրությանը, ինչպես է զարգանում զբոսաշրջությունը ամբողջ Հայաստանում և հատկապես Սյունիքում՝ անհրաժեշտության դեպքում լրացուցիչ օժանդակություն կտրամադրվի:

«Գիտենք նաև, որ բավականին ակտիվ աշխատում է Սյունիքի հարցերով աշխատանքային խումբը: Այնտեղ անցած տարվա ընթացքում մեկ միլիարդից ավել գումար է հատկացվել տարբեր նախագծերին և աշխատանքները այնտեղ շարունակվում են», - եզրափակեց Քերոբյանը:

Աղբյուրը՝

[https://armenpress.am/arm/news/1073400.html?fbclid=IwAR2ibMxd5Rrb0AKc1FNsVB\\_kTUNV74aye\\_hImicgZl06rRTLUHOpn6IIomU](https://armenpress.am/arm/news/1073400.html?fbclid=IwAR2ibMxd5Rrb0AKc1FNsVB_kTUNV74aye_hImicgZl06rRTLUHOpn6IIomU)

**16.01.2022**

**Ադրբեջանցիները հերքում են, թե ոչխար են առևանգել և հրաժարվում են վերադարձել Տեղ համայնքի հովվի 350 ոչխարը**

Տեղ գյուղի հովիվ Սուրիկ Մաթևոսյանի մոտ 350 ոչխարները, որոնք ադրբեջանցիները առևանգել էին, դեռ չեն վերադարձրել: Tert.am-ի հետ զրույցում ասաց Տեղ համայնքի ղեկավար Դավիթ Ղուլունցը:

«Արդեն քանի օր է բանակցություններ են գնում: Սպասում ենք, տեսնենք՝ ինչ պատասխան կտան: Ադրբեջանցիները հերքում են, ասում են՝ նման բան չի եղել, փաստեր ներկայացրեք, մենք էլ ներկայացրել ենք, ոչխարը տանելուց նկարներ եղել են, տվել ենք ռուս խաղաղապահների հրամանատարությանը, իրենք ներկայացրել են ադրբեջանցիներին, հիմա սպասողական վիճակ է: Այդ մարդու եղած չեղածը այդ ոչխարներն են, իր սեփականությունը, հիմա չգիտեմ ինչ կլինի», - ասաց Տեղ համայնքի ղեկավար Դավիթ Ղուլունցը:

Հիշեցնենք, որ հունվարի 13-ին ադրբեջանցիները առևանգել էին Տեղ համայնքի 53-ամյա հովիվ Սուրիկ Մաթևոսյանին և նրա մոտ 350 ոչխարներին: Մեկ օր անց բանակցությունների արդյունքում խաղաղապահներին են փոխանցել գերեվարված Սուրիկ Մաթևոսյանին, սակայն առևանգված ոչխարները մինչև այսօր շարունակում են մնալ ադրբեջանցիների մոտ:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/adrbejantsinery-herqum-en-te-ochkhar-en-arevangel-ev-hrazharvum-en-veradardzel-tekh-hamaynqi-hovvi-350-ochkhary>

**14.01.2022**

### **Նախարարը Սյունիքում դիտարկել է ճանապարհաշինական աշխատանքները**

Սյունիքում է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը. երկօրյա աշխատանքային այցի նպատակը մարզում ընթացող ճանապարհաշինական աշխատանքները դիտարկելն է, նոր կառուցվող այլընտրանքային ճանապարհների որակի ու հատկապես ձմռանը դրանց անցանելիության ստուգումը:

Այսօր նախարարը Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանի ու մարզպետի տեղակալ Նարեկ Բաբայանի հետ անցել է Կապան-Ճակատեն կառուցվող նոր ճանապարհով, ծանոթացել աշխատանքների ընթացքին, զրուցել ճանապարհաշինարարների ու երթուղեկող վարորդների հետ: Այնուհետև Գ.Սանոսյանը եղել է Վերին Խոտանան գյուղը շրջանցող եւ Տաթեւ-Լձեն ճանապարհների հատվածներում, որոնց կառուցումը թույլ կտա բեռնատարներին շրջանցել դժվարանցանելի ոլորանները:

Երեկ նա դիտարկել էր Խոտ-Որոտան, Բարձրավան-Քաշունի, Տանձավեր-Շուռնուխ ճանապարհների կառուցման ընթացքը:

Գարնանը Սյունիքում կմեկնարկեն այլընտրանքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքները:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/syunikregionaladministration/posts/291365016366203>

**13.01.2022**

### **Ադրբեջանցիներն առևանգել են Տեղ համայնքի հովիվին եւ իր ոչխարներին**

Ադրբեջանցիներն առևանգել են Սյունիքի մարզի Տեղ համայնքի 53-ամյա հովիվին եւ իր ոչխարներին: Այս մասին [NEWS.am](https://www.news.am)-ի հետ զրույցում ասաց Արավուսի համայնքի ղեկավար Արզամ Հովսեփյանը:

«Հավանաբար ոչխարներին արածացնելով՝ կամաց-կամաց գնացել ու հասել է սահմանին: Սահմանի մի կողմում մերոնք են, մյուս կողմում էլ՝ իրենք, անցել է սահմանը, իրենք էլ միանգամից իջել են ու տարել: Հովիվն ունի 1000 ոչխար ունի՝ երկու մասի բաժանված, երեւի իր հետ 500 ոչխար է եղել», - ասաց Հովսեփյանը:

Հովսեփյանը հայտնեց, որ բանակցություններ կիրականացվեն ռուսական կողմի միջնորդությամբ Տեղի բնակչին վերադարձնելու ուղղությամբ:

Աղբյուրը՝ <https://news.am/arm/news/681888.html>

**10.01.2022**

### **Սյունիք եւ Շիկահող գյուղական բնակավայրերում վարչական նոր ղեկավարներ նշանակվեցին**

Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը հունվարի 8-ին աշխատանքային այցով եղել է Սյունիք եւ Շիկահող գյուղական բնակավայրերում և տեղի բնակիչներին ներկայացրել նշյալ գյուղերի նորանշանակ ղեկավարներին՝ Գառնիկ Հարությունյանին և Զորիկ Նավասարդյանին: Համայնքի ղեկավարն իր խոսքում շնորհակալություն է հայտնել նախկին ղեկավարներ Արթուր Մանուչարյանին և Տիգրան Հովհաննիսյանին՝ կատարած աշխատանքի և գրանցած արդյունքների համար, իսկ նորանշանակ ղեկավարներին մաղթել բեղմնավոր ու հետևողական աշխատանք գյուղի կարևորագույն խնդիրների լուծման ուղղությամբ: Նշենք, որ Տիգրան Հովհաննիսյանը Շիկահող գյուղի բնակիչ է, ով հասարակական հիմունքներով ստանձնել էր վարչական ղեկավարի պարտականությունների կատարումը՝ գյուղի վարչական ղեկավարի աշխատանքից ազատվելուց հետո:

Եվ՝ Սյունիք, և՛ Շիկահող գյուղական բնակավայրերում համայնքի ղեկավարը անմիջական շփումներ ունեցավ բնակիչների հետ, ներկայացրեց առաջիկայի համար նախատեսված ծրագրերը, լսեց նրանց հուզող հարցերն ու դժգոհությունները, որոնք հիմնականում վերաբերում էին անվտանգությանը, գյուղամիջյան ճանապարհներին, խմելու և ռոտոգման ջրերին:

Բարձրաձայնված խնդիրներին համայնքի ղեկավարը տվեց սպառիչ և ամբողջական պատասխաններ: Որոշ հարցերի առնչությամբ էլ հանձնարարեց ուսումնասիրել խնդիրը՝ դրանց լուծում տալու համար:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/Kapanmunicipality/posts/1008043716455773>

**06.01.2022**

### **Կապանում Իրանի գլխավոր հյուպատոսության բացումը՝ կարևոր ազդակ. Վարդան Ոսկանյանը պատասխանել է «Սյունյաց երկրի» հարցերին**

Հայաստանի և մասնավորապես Սյունիքի շուրջ տեղի ունեցող ռազմաքաղաքական իրադարձությունների առնչությամբ Իրանի Իսլամական Հանրապետության դիրքորոշումը շարունակում է զբաղեցնել սյունեցիներիս ուշադրությունը:

2021-ի տարեվերջյան զարգացումները, անշուշտ, որոշ առումով նորություն էին այդ տեսակետից:

Մեզ հետաքրքրող հարցերի շուրջ գրույցի հրավիրեցինք Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Վարդան Ոսկանյանին:

–Պարոն Ոսկանյան, նախ՝ շնորհակալություն՝ մեր պարբերականին հերթական անգամ հարցազրույց տալու պատրաստակամության համար:

Ամանորի նախօրեին հայտարարություն տարածվեց առ այն, թե Իրանի իշխանությունները 15 օրով փակում են հարևան երկրների հետ ցամաքային սահմանը՝ կորոնավիրուսի «Օմիկրոն» մանրէահիմքի տարածման սպառնալիքի պատճառով:

Իսկապե՞ս ցամաքային սահմանի փակման պատճառը համաճարակային վտանգն էր, թե՞...

–Իրականում՝ այո, իրանցիները փակել են Իրանի ցամաքային սահմաններն անխտիր բոլոր հարևան պետությունների համար՝ Հայաստանի Հանրապետություն, Ադրբեջան կոչվող արհեստածին կազմավորում, Թուրքիա, Պակիստան... Բոլոր հարևան պետությունների հետ փակել են ցամաքային սահմանը, քանի որ իրանցիները ցանկանում են կառավարելի պահել համաճարակային իրավիճակն իրենց երկրում: Հետևաբար՝ սահմանների փակումը քաղաքական ենթատեքստ չուներ:

- «Իրնա» գործակալությունն օրեր առաջ տեղեկատվություն տարածեց Կապան քաղաքում Իրանի գլխավոր հյուպատոսություն բացելու մասին: Դուք դա, Ֆեյսբուքյան գրառմամբ, կարևոր ազդակ համարեցիք առ այն, թե որքան կարևոր է համարում պաշտոնական Թեհրանը Հայաստանի Սյունիքի մարզը հայ-իրանական հարաբերությունների համատեքստում:

Նման դիրքորոշում հայտնելու համար, հավանաբար, լուրջ հիմքեր ունեիք:

–Այո, իրանցիները Կապանում հյուպատոսության բացմամբ միանգամից մի քանի ազդակ են հղում. առաջինը, բնականաբար, ուղղված է Հայաստանի հանրությանը. դա նշանակում է, որ իրանցիները Սյունիքի հարցում դրսևտրելու են անկոտրում եւ անզիջում դիրքորոշում, խոսքը հատկապես ադրբեջանաթուրքական վտանգին դեմ հանդիման Հայաստանին մենակ չթողնելու դիրքորոշման մասին է:

Երկրորդ՝ այդ քայլը հստակ ուղերձ էր Բաքվի բռնապետին առ այն, որ Սյունիքի մարզի նկատմամբ ցանկացած ոտնձգություն, ըստ էության, բախվելու է նաեւ իրանական դիվանագիտական ներկայությանը, որովհետեւ, ինչպես գիտեք, Հայաստան-Իրան հարաբերություններում հենց Սյունիքի մարզն է այն կենսական կարևորության հատվածը, որն ապահովում է Հայաստանի եւ Իրանի միջեւ ոչ միայն ցամաքային հաղորդակցությունը, այլ նաեւ Իրանին մաներելու եւս մի հնարավորություն է տալիս՝ դեպի հյուսիս՝ իր տնտեսական ու քաղաքական ծրագրերն առաջ տանելու ուղղությամբ, քանի որ, փաստորեն, Հայաստանին եւ Սյունիքի մարզին միակ այլընտրանք մնում է ադրբեջանաթուրքական մեկ ընդհանուր աշխարհագրական տարածքը: Այդ երկու պետությունը ձեւական առումով առանձին են, բայց, հաշվի առնելով նրանց շահերի համընկնումը, իրականության մեջ գործ ունենք միասնական աշխարհաքաղաքական տարածքի հետ, որի միակ այլընտրանքը Հայաստանի Հանրապետությունն է՝ դեպի հյուսիս իրանական ելքն ապահովելու համար: Կա եւս մի շատ կարևոր հանգամանք, որի վրա քիչ են ուշադրություն դարձնում. հայտնի գորավարժություններից հետո Իրանը հետ չի քաշել գորքերն Ադրբեջանի հետ սահմանի ամբողջ երկայնքից: Սա ցուցիչ է, թե Իրանը որքան ուշադիր է իր հյուսիսային սահմանների նկատմամբ, եւ թե՛ դիվանագիտական, թե՛ ռազմաքաղաքական զսպման գործիքակազմեր է կիրառում Ադրբեջանին սանձելու, ինչու չէ՛ նաեւ Հայաստանի դիրքերն ամրապնդելու համար: Դիվանագիտական գործիքների կիրառման օրինակ է Կապանում հյուպատոսություն բացելու որոշումը:

–Աղբբեջան-Իրան հարաբերությունների լարվածությունը, որն ինչ-որ չափով պայմանավորված էր Սյունիքի շուրջ զարգացումներով, որին ականատես եղանք աշնանը, կարծեք, հարթվեց:

Արդյո՞ք ճիշտ է մեր դիտարկումը:

–Իրանաաղբբեջանական հարաբերություններում առանց բացառության որեւէ խնդիր չի լուծվել, այսինքն՝ խնդիրների ամբողջ համակույտը, որոնք պարբերաբար բերում են այդ երկրների միջեւ լարվածության աճին, այժմ էլ առկա է: Մասնավորապես՝ խոսվում է Աղբբեջանի տարածքում ահաբեկչական կազմավորումների ներկայության եւ դրանց վերաբերյալ իրանական դիրքորոշման մասին: Խոսքն Աղբբեջանի ներսում հսկայական իսրայելական ազդեցության մասին է, որը չի կարող չանհանգստացնել իրանական կողմին՝ հաշվի առնելով Իրան-Իսրայել լարված հարաբերությունները: Այնուհետեւ՝ Աղբբեջանի ներսում շիա խմբավորումների գոյությունն ու նրանց վրա առկա ճնշումները, որ շարունակվում է: Աղբբեջանը դեռ որեւէ դրական քայլ այս ուղղությամբ չի կատարել: Ավելին Աղբբեջանն այդ խմբավորումները համարում է իրանական հինգերորդ շարասյուն երկրի ներսում:

Թուրքական օրհնությամբ եւ ֆինանսավորմամբ Իրանի ներսում պանթյուրքական խմբավորումների առկայությունը եւս խաթարում է այդ պետությունների հարաբերությունները. այդ խմբավորումներն Իրանի ներսում խթանում են ներքին անկայունությունը: Թե՛ նշաձս խնդիրները, թե՛ բազմաթիվ այլ խնդիրներից որեւէ մեկը չեն լուծվել:

Ուստի՝ իրանցիներն այս փուլում առաջնային համարելով իրենց հարաբերությունների խնդիրը Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ, փորձում են իրենց սահմանների երկայնքով ապահովել որոշակի կայունություն, ինչը հնարավորություն կտա Իրանին նաեւ Վիեննայում ընթացող միջուկային համաձայնագրի բանակցություններում ունենալ ավելի ամուր դիրքեր:

Նույնիսկ, չնայած լարվածության որոշակի նվազմանը եւ պաշտոնյաների փոխադարձ այցերին, որեւէ խնդիր Իրան-Աղբբեջան հարաբերություններում չի լուծվել:

–Նիկոլ Փաշինյանն ու Իլհամ Ալիևը դեկտեմբերի 14-ին Բյուսեւելում (ԵՄ խորհրդի նախագահ Շարլ Միշելի միջնորդությամբ) տեղի ունեցած հանդիպման ընթացքում վերահաստատեցին իրենց որոշումն ու պայմանավորվածությունը՝ Երասխ-Ջուլֆա-Օրդուբադ-Մեղրի-Հորադիզ երկաթուղու կառուցման ու գործարկման վերաբերյալ:

Ընդ որում՝ վարչապետը նշեց, որ այդ երկաթգծի վերաբացմամբ հաղորդակցության նոր ուղի կբացվի Հայաստանի և Իրանի միջև՝ Ջուլֆայով, ինչը դրական ազդեցություն կունենա երկու երկրի տնտեսական հարաբերությունների զարգացման վրա:

Իսկապե՞ս դա այդքան մեծ նշանակություն ունի Իրան-Հայաստան հաղորդակցության համար:

Մի՞ թե մեզ չի բավարարում ներկայումս գործող տրանսպորտային ուղին՝ Սյունիքով:

Արդյո՞ք դա չի նշանակաւում, որ սյունիքյան ուղին կկորցնի իր ներկայիս (կամ՝ վերջին 30 տարում ունեցած) նշանակությունը:

Իրանը նույնպե՞ս ոգևորված է երկաթուղային այդ ճանապարհի վերագործարկմամբ:

– Նշված երկաթուղային հատվածը, որն իրանական Ջուլֆան միացնելու է Ջուղայի հետ եւ, Երասխի միջոցով, Հայաստանի Հանրապետությանը, Իրանի համար ունի կարելոր

նշանակություն, եթե հաշվի առնենք մեկ հանգամանք՝ Իրանը կկարողանա կապվել Ռուսաստանի հետ՝ Հայաստանի եւ Վրաստանի տարածքով: Այո, իրանցիներն այդ երկաթուղու ապաշրջափակումը դիտարկում են որպես դրական հնարավորություն, բայց դրան զուգահեռ առկա են նաեւ ռիսկեր, հատկապես, եթե հաշվի առնենք հանգամանքը, որ Հայաստանն Իրանի հետ պատրաստվում է ցամաքային հաղորդակցության բարձր մակարդակ ապահովել Հյուսիս-Հարավ մայրուղու՝ Սյունիքով անցնող հատվածի միջոցով: Առկա է որոշակի անհանգստություն առ այն, որ Սյունիքի ցամաքային ուղին, այդ երկաթգծի գործարկումով, կարող է կորցնել իր նշանակությունը հայ-իրանական համագործակցության համատեքստում: Իրավիճակը բարդանում է նաեւ նրանով, որ Կապան-Գորիս ճանապարհի մի հատվածում, ադրբեջանական բռնազավթման արդյունքում կամ հետեւանքով, իրանական ծանր բեռներ տեղափոխող բեռնատարները հանդիպում են դժվարությունների: Չնայած նրան, որ Տաթեւ-Կապան ճանապարհը նորոգվել է, իրանական ծանր բեռներ տեղափոխող բեռնատարների համար այդ ճանապարհը չի համապատասխանում տեխնիկական չափորոշիչներին, որի հետեւանքով նրանք ստիպված են լինում օգտվել Կապան-Գորիս ճանապարհից՝ անցնելով ադրբեջանական չակերտավոր անցակետով:

Մենք պետք է գանազանենք առաջնային եւ երկրորդական խնդիրները. եթե Հայաստանի Հանրապետությունը կարող է ապահովել 200 միլիոն դոլարի ներդրում (մոտավորապես այդքան է գնահատվում Մեղրիի հատվածում երկաթուղու վերականգնումը), ապա այդ ներդրումները պետք է ուղղորդվեն ոչ թե այդ երկաթուղու կառուցմանը, որն ապահովելու է նաեւ Թուրքիա-Ադրբեջան կապը, այլ Սյունիքի մարզում Հյուսիս-Հարավի շինարարությանը:

**–Արդյո՞ք Իրանի Իսլամական Հանրապետության համար միևնույն կլինի, թե իրավական ի՞նչ ռեժիմով է գործելու Մեղրիով անցնող երկաթուղին:**

–Իրանցիները բազմիցս շատ բարձր մակարդակով՝ գրեթե բոլոր բարձրաստիճան պաշտոնյաների մակարդակով, հայտարարել են, որ Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքով որեւէ՝ այսպես կոչված՝ միջանցք կամ որեւէ կառույց, որը դուրս կլինի Հայաստանի Հանրապետության վերահսկողությունից, իրենց համար անընդունելի է: Հայ-իրանական հարաբերություններն Իրանի համար էական նշանակության շահերի գոտի են: Հետեւաբար՝ իրանական կողմը՝ իր ունեցած ամբողջ գործիքակազմով եւ հնարավորություններով, գրեթե մեզ հետ հավասար պայքարում է թուրք-ադրբեջանական այդ լկտի նկրտման դեմ, որը միտված է հասնելու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի տարածքով միջանցք կամ միջանցքներ ստանալուն: Դա պանթյուրքական ծրագրի կարեւոր բաղադրիչ է՝ 100 տարվա վաղեմություն ունեցող, որի ուղղությամբ թուրքական կողմը շարժվում է մեթոդական քայլերով: Բայց կրկնեմ՝ այստեղ բացվել է համագործակցության շատ հետաքրքիր տիրույթ, որը հնարավորություն կտա պանթյուրքական ծրագրի դեմ պայքարել ոչ թե միայնակ, այլեւ Իրանի օգնությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման չակերտավոր միջանցքը ձեռնտու չի լինելու ոչ մի պարագայում նաեւ Ռուսաստանին, նաեւ ռուսական կողմի աջակցությունը կարելի է ակնկալել: Ստեղծվում է հետաքրքիր հարթակ՝ Հայաստան-Իրան-Ռուսաստան ձեւաչափով, որը միտված կլինի ոչ միայն պանթյուրքական այս ծրագիրը տապալելուն, այլեւ մեր տարածաշրջանում հակասահաբեկչական պայքարն առաջ մղելուն: Նման ազդակներ արդեն Ռուսաստանի կողմից նույնպես եղել են. ինչպես

հիշում եք՝ Ռուսաստանն ամենաբարձր պաշտոնյաներից մեկի մակարդակով հայտարարել էր 44-օրյա պատերազմի ընթացքում ահաբեկիչների ներկայության մասին:

– **Անկախության տարիներին, որքանով տեղյակ ենք, 2-3 ծրագիր առաջ քաշվեց՝ Հայաստան-Իրան երկաթգծի կառուցման համար (Ադրբեջանի տարածքը շրջանցող):**

**Ինչո՞ւ այդ ծրագրերը կյանքի չկոչվեցին և առհասարակ մոռացվեցին՝ առաջնայնությունը զիջելով Երասխ-Ջուլֆա-Իրան երկաթգծին:**

– Ընդհանրապես Հյուսիս-Հարավ ավտոճանապարհի շինարարությունը, ես նաև դա պնդել եմ ու գրեթե մեկ տասնամյակ խոսում եմ այդ մասին, որ Սյունիքի հատվածից, այսինքն՝ Հայաստան-Իրան սահմանից պետք է սկսել, բայց, ցավոք սրտի, որքանով տեղյակ եմ, ժամանակին Հայաստանի Հանրապետության վրա եղել են որոշակի դիվանագիտական ճնշումներ օտար ուժերի կողմից, որպեսզի, հաշվի առնելով Արեւմուտքի եւ Իրանի լարված հարաբերությունները, այդ ծրագիրը Սյունիքի կողմից չսկսվեր: Ամեն դեպքում թույլ է տրվել սխալ: Իսկ Հայաստան-Իրան երկաթուղու ծրագիրը որեւէ պարագայում չպետք է մոռացության մատնվեր. հիմա մենք ականատես ենք, որ այդ ծրագրի մասին ոչ միայն չեն խոսում, այլ այդ ծրագիրը, կարծեք, դուրս է մնացել մեր օրակարգից: Հայաստան-Իրան ուղղակի երկաթուղու ծրագիրը չափազանց կարելուր կլիներ ոչ միայն տնտեսական, այլև Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքերն ամրապնդելու, ինչպես նաև ադրբեջանաթուրքական շրջափակումը հաղթահարելու իմաստով: Եթե մենք այդ երկաթուղու ծրագիրը կյանքի կոչեինք, ապա, կարծում եմ, այսօր Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կունենայինք շատ ավելի բարվոք իրավիճակ:

Հետևաբար՝ թե՛ Հայաստան-Իրան երկաթուղու ծրագիրը պիտի գոնե քաղաքական օրակարգ բերվի, թե՛ Հյուսիս-Հարավ մայրուղու կառուցմանը պիտի լրջագույն ուշադրություն դարձվի:

– Երբ 2021-ի աշնանն անցակետ կամ մաքսակետ կարգվեց Գորիս-Կապան ճանապարհին, երբ (դրանից առաջ՝ ամռանը) մի քանի օրով (Կարմրաքարի հատվածում) շրջափակվեց Գորիս-Կապան մայրուղին, մեզանում այլընտրանքային ճանապարհների կառուցումն իսկապես հրամայական դարձավ:

Հենց այդ ժամանակ էլ Իրանի Իսլամական Հանրապետությունը պատրաստակամություն հայտնեց՝ աջակցել Հայաստանին՝ այլընտրանքային ճանապարհների կառուցման գործում:

**Արդյո՞ք Իրանի պատրաստակամությունը պատշաճ ըմբռնումի արժանացավ մեզանում և գործնական դրսևորումներ ունեցավ:**

– Ես կարծում եմ՝ որ մենք պետք է աշխատեինք երկու ուղղությամբ՝ ոչ միայն այլընտրանքային ճանապարհներ կառուցելու, այլև Որոտան-Գորիս ճանապարհի հայտնի հատվածն ադրբեջանական բռնազավթումից ազատագրելու, ինչի վերաբերյալ ազդակներ եղել են Իրանից: Բայց, ցավոք սրտի, այդ հնարավորությունը բաց է թողնվել: Հայաստանի ցանկացած իշխանություն, որը մտածում է մեր պետության անվտանգության եւ ապագայի մասին, պետք է այս հարցին անպայմանորեն անդրադառնա՝ նաև հաշվի առնելով հանգամանքը, որ վերջին եռակողմ հանդիպման ընթացքում Ռուսաստանի Դաշնության նախագահը հստակորեն հայտարարեց, թե Հայաստանի եւ Ադրբեջանի միջև սահմաններն անորոշ են, հետևաբար՝ ադրբեջանական ներկայությունը Գորիս-Կապան ավտոճանապարհի Որոտանի հատվածում եւ Ճակատենի հատվածում, ըստ էության, անօրինական է: Այսինքն՝

այդ տարածքներն ադրբեջանական տարածք չեն: Ադրբեջանի համար լավագույն դեպքում դա կարելի է դիտարկել որպես վիճելի տարածք, իսկ հայկական շահերի տեսանկյունից՝ դա Հայաստանի Հանրապետության տարածք է:

Կապան-Գորիս ճանապարհահատվածի ադրբեջանական անցակետը ոչ միայն տնտեսական նշանակություն ունի, այլև միտված է հայ-իրանական հարաբերությունները խոչընդոտելուն, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության ներքին տեղաշարժերը խաթարելուն:

Ինչ վերաբերում է այլընտրանքային լուծումներում իրանական կողմի ներգրավմանը, ցավոք սրտի, Իրանի պատրաստակամությանը պատշաճ արձագանք չի եղել Հայաստանի կողմից: Ես տեղյակ չեմ, թե ինչ սահմանափակումներ կան, գուցե Հայաստանի վրա կրկին ճնշումներ կան՝ իրանական կողմի ներգրավման առումով, բայց այժմ Հայաստանը գտնվում է այնպիսի իրավիճակում, որ նման ճնշումների առջև չպիտի ընկրկի, իսկ իրանական կողմը պետք է ներգրավված լինի նաև ճանապարհաշինարարական գործընթացներում:

**–Անցած դեկտեմբերի 24-ին ՀՀ վարչապետն Արցախի կարգավիճակի առնչությամբ նկատառումներ հայտնեց, որն ինչ-որ չափով ցնցեց հայ հանրությանը:**

**Վարչապետի դիրքորոշմանը հակադարձեցին Արցախի իշխանությունները, ընդ որում՝ առաջին անգամ:**

**Արդո՞ք այդ ամենին արձագանքեցին Իրանի իշխանությունները:**

– Իրանական կողմից արձագանքները շատ թույլ են: Ակնհայտ է, որ Իրանի համար այժմ չափազանց կարևոր է հատկապես հարավկովկասյան տարածաշրջանում իր դիրքերի ամրապնդումը: Այդ ամրապնդումը փորձում են իրականացնել՝ որոշակիորեն հաշվի առնելով նաև Արցախյան հիմնախնդրի ապագան, որը նախանշվել է Իրանի հոգեւոր առաջնորդի հայտնի ձեւակերպման մեջ, որը պարունակում էր մի շարք կետեր: Այդ կետերի համաձայն, չնայած շեշտադրվում էր Ադրբեջանի տարածքային ամբողջականության հանգամանքը, բայց միեւնույն ժամանակ հստակորեն եւ առաջին անգամ նման բարձր մակարդակով՝ իրանական կողմն արձանագրում էր արցախահայության անվտանգության խնդիրը: Ուստի եւ Իրանի հետ այս ուղղությամբ աշխատելու պարագայում մենք կարող ենք հենվել հենց հոգեւոր առաջնորդի՝ արցախահայության անվտանգությունն ապահովելու դիրքորոշման վրա, որն ուղենիշ է հայ-իրանական հարաբերություններում՝ Արցախյան խնդրի շուրջ համատեղ դաշինք ձեւավորելու համար:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/kapanum-irani-glkhavor-hyupatosutyany-batsumy-karevor-azdak-vardan-oskanyany-pataskhanel-e-syunyats-erkri-hartserin>

Կազմող՝ Ս. Ալավերդյան